

ԳԹՈՒԹԵԱՆ ՔՈՅՐԵՐ *

(Ուղեւորի օրագրից)

IV

Օգոստոսի վերջն էր։ Վենետիկից վերադառնում էի Վիեննա, Թրիեստի կայարանում խիստ շատ ուղևորներ ներս մտան վագոն։ այնպէս որ տեղս նեղացաւ։ Ստիպուած էի իրեղէններս ամփոփել, ալլ և ինքս կծկուել մի անկիւն, որպէս զի ուրիշները ևս իրենց տեղը բըռնէին։ Այս բանն, ի հարկէ, գիւր չեկաւ ինձ։ Որովհետև գնացքը Վենետիկից ելել էր գիշերով և, գրեթէ, դատարկ։ այդ պատճառով տեղի բնդարձակութիւնից օգտուել էի աւելի քան շուալլօրէն։ Այժմ ստիպուած էի բաւականանալ քչով, որպէս զի ուրիշներն էլ իրենց բաժնին տիրանալին։ Այստեղ ահա, սկսալ մտածել այն մասին թէ՝ ինչպէս վատ է երբ մարդ սովորում է վէն ու բօր ապելուն։ Որովհետև կեանքը նոյնպէս մի գնացք է, որ շարունակ շարժւում, սլանում է առաջ և չը գիտես թէ նրա ո՞ր կայարանում ստիպուած կլինիս կըծկուել կամ իրերդ ամփոփել։ Ուրեմն, աւելի լաւ է որ մարդ հենց սկզբից սովորէ իւր իղձերը չափաւորելուն և բաւականանալ քչով, որպէս զի նեղութեան օրերը հասնելուց՝ ստիպուած չը լինի ակամայ կծկուիլ և դրահամար էլ վշտանալ։

Այս մտածութեան մէջ էլ դեռ որ ականջիս գիպան ռուսերէն խօսքեր։ Սա ինձ համար նարութիւն էր, Վասն զի Ուռասիոյ սահմաններից ելնելուց լետոյն Եւրոպայում գրեթէ ոչ մի տեղ չէի լսել այդ բարբառը։

Գլուխս բարձրացը և տեսալ որ խօսողը քիչ հեռու կանգնած, ոչ շատ տարիքոտ, մաքուր հագնուած, լուրջ և, մի և նոյն ժամանակ, համակրելի դէմքով մի պարոն է, որին ընկերակցում էր տարիքն առած ու կարճահասակ մի կին, որ թէպէտ շատ տգեղ չէր, բայց երբ և իցէ գրաւիչ եղած լինելու նշան էլ չունէր վրան։ Նրանք իրար հետ խօսում էին ընտաներար և եղակի դէմքով. որից եզրակացը թէ՝ առաջինը որդին է, իսկ երկրորդը՝ մալրը։

Ուուսերէն խօսողներին, որոնք դիմացս նստան, մի տեսակ հայրենակից համարելով ինձ, շտապեցի հետերնին ծանօթանալ, որի համար նրանք ուրախ եղան։ Իմ մասին հարկ եղած ծանօթութիւնը տալուց լետոյ, իմացալ որ պարոնը ուուսաստանցի է և մալրաքաղաքի միջնակարգ դպրոցներից մէկի գերմաններէն լեզուի ուսուցիչը. իսկ հետը խօսողը՝ իւր... կինը։

Այեն տեսակ նորութեան կը սպասէի, բայց լսել թէ՝ ալդ լիսունամեալ, երեսը խորշումած, աչքերը կկոցուած և արդէն թալիադէմ պառաւը ամուսինն է այն զուարթ ու կայտառ տղամարդու, որ, գուցէ, հազիւ էր քառասունն անցել, չէի սպասիլ Ալսուամենալիւ, զարմանքս զսպելով՝ սկսալ խօսակցիլ նրանց հետ և ընդնմին ուշի ուշով. հետևել կնոջը, իմանալու համար թէ՝ ինչնվ է արդեօք նա գրաւել այս երիտասարդին և իւր նման «անցեալ կատարեալին» կապել սրա գլխին։

Իմ հետամտութիւնն, ի հարկէ, չէր կարող ալդպէս շուտ ծանօթացնել ինձ նրանց անցեալին, կամ բացատրել գէթ մինը այն գաղտնիքներից, որոնք պատճառ էին եղել այս անհաւասար ամուսնութեան, բայց նա ծանօթացը ինձ մի անսպաս ճշմարտութեան. ալդ այն էր՝ որ ես տեսալ թէ Վերա Վասիլեսնան (ալդ էր տիկնոջ անունը) բաւական խելացի, նուրբ դիտող և համբերատար մի կին է։

Այս լատկութիւններով, առ հասարակ բնութիւնը նուազ չափով է օժտում կանանց. բայց Վերա Վասիլեսնալին, չը գիտեմ որ բացառիկ օրէնքի հիման վրայ առուել էր աւելի։

Այդ պարզ երևաց բոլոր այն զրուցի ժամանակ,

որ տեղի էր ունենում մեր մէջ դեռ Թրիէստի կալաբանից սկսած և օրը, չեմ լիշում, ինչ առիթով արդէն փոխուել էր լուրջ խնդրի, այն է՛ կանանց ազատագրութեան հարցին:

Այս խնդրում Խւան Խւանիչը (տիկնոջ ամուսինը), պահպանողական հայեացքների տէր էր, մինչդեռ տիկինը, ինչպէս որ սպասելի էր՝ ազատամիտ:

Եւ սակայն սա հարցերին վերաբերում էր ոչ այնպէս լախուռն, ու վայր ի վերոյ, ինչպէս, առհասարակ անում են շատ կանալք, կամ անփորձ երիտասարդներ այլ միշտ կորրեկտ ու տրամաբանօրէն: Խւր առարկութիւնները նա հաստատում էր փաստերով, իսկ ենթադրութիւնները հանում այնպիսի օրինակներից, որոնց գէմ վիճելը շատ էլ հեշտ չէր լինում:

Ես, սակայն շարունակ հարցեր էի տալիս և մի մի անգամ էլ կատակով աշխատում՝ կրուացնել ամուսիններին: Խւան Խւանիչը, որ աւելի պարզասիրտ և դիւրագրգիռ էր, երբեմն բռնւում էր իմ լարած թակարժում, մինչդեռ տիկինը զգուշութեամբ խոլս էր տալիս և լաճախ իւր խոհեմ ու քաղաքավար դիտողութեամբ ի դերև հանում իմ չարամիտ ջանքը: Եթէ պատահում էր որ ամուսինը գրգռւում էր վիճելիս, նա այնպէս մեղմ ու ամոքիչ խօսքերով հանգստացնում էր նրան, որ ասես թէ՛ մի մայր էր. որ խօսում էր իւր տասներկու տարեկան զաւակի հետ:

«Ահա թէ, ինչո՞վ է գրաւել պառաւը երիտասարդին», մտածեցի ես և իմ աշքում գին ստացաւ տիկնոջ ալդ լատկութիւնները: Այնուհետև արդէն լարգանքով էի վերաբերում գրացուհուս և սիրով լսում նրա դտողութիւնները:

Գնացքը հասաւ Կրայնալի հերցօգութեան մայրաքաղաքը՝ Լայրախ: Այստեղ գուրս գնացող ուղևորներին փոխարինեցին նորերը, որոնց թւում, Վերա Վասիլեանալի կողքին և ուղղակի իմ դիմաց, տեղ բռնեց տարօրինակ հագուստով մի բարձրահասակ գեղեցկուհի, որին ես սկզբում միանձնուհի կարծեցի: Վասն զի նա հագած էր մոլուկապոյտ մահուգի երկայն պարեգօտ և նրա վրայ կապած՝ նոյն գոյնի կտաւից հասարակ գող-

նոց. մինչդեռ գլխին ծածկած էր ձիւնի պէս սպիտակ, թևատարած մի փակեղ, որ նման էր աւելի փոքրիկ հովանոցի քան գլխանոցի և պատրաստուած էր կտաւից ու խնամքով օսլալած. իսկ կրծքին ունէր նոյնալիսի կտորից օձիք՝ տասնաբանեալ պատուիրանի տախտակների ձեռով: Իբրև անհրաժեշտ պատկանելիք իւր սքեմին՝ նա կախած էր գոտկատեղից կանաչ երիզի վրայ շարած երկար, սևահատիկ մի համարիչ, որի ծալրին ճօճում էին աղիւսագոյն ոսկորէ մի գանգ և փոքրիկ, պղնձէ խաչեալ Քրիստոսով:

Նստելով մեր դիմաց, նա դրաւ կողքին սև շալէ: մի քսակ, որ մինչև այն բոնած էր ձեռքին և նրանից հանելով մի սև, կիսագործ գուլպալ. սկսաւ գործեր:

Այժմ կարելի էր հանգիստ կերպով դիտել ալդ կնոջ պատկերը, որ ճշմարիտ գեղեցկութեան մի հազուագիւտ տիպար էր: Եւ թէպէտ արդէն կեանքի գարունը անցուցած, այսուամենալիւ նա ունէր դեռ այնքան գրաւչութիւն որ մարդ միանգամ վրան նայելուց՝ էլ չէր ուզում աչքերը դարձնել ուրիշ կողմ կամ զբաղեցնել նըրացնց ուրիշ առարկայով:

Թևատարած փակեղը, որ կուսի սիրուն գլուխը պատելով՝ չէր երևեցնում մազերի և ոչ մի գիսակ, նրա գէմքի վերին մասի վրայ ձգել էր մի մեղմ ստուեր, որի միջից մեծ մեծ, խաժակն աշքերը՝ պատած երկար արտևանունքներով՝ փալլում էին մի քաղցր ու խաղաղ լուսով, որպիսին տալիս է արևել՝ թեթև ամպերով սքօղուած ժամանակ: Նրա մաքուր, մաքմարէ գէմքը, հազիւ շիկնած մի վարդանիշով, որը կարծես վաղուց սառել, մնացել էր ալտերի վրայ, արտալալտում էր աղնուական վեհութիւն: Նա նայում էր շուրջը, ըստ երևութիւն, հանգիստ, մինչև իսկ մի տեսակ սառն ան տարբերութեամբ. բայց ալդ հանգիստ հայեացքի մէջ ցօլում էին կալծեր, երբ հրաշալի աշերը սևեռում էր մի կէտի, որ հետաքրքրում էր իրեն: Այդպիսի ժամանակ՝ նրա գէմքի վրայ խաղում էր և ժպիտ, որ, սակայն հազիւ էր նուրբ շրթունքները վառում նման գերեզմանի վրայ փալլող վերջնալուսին: Իսկ ալդ շրթունքները, թէպէտ գեռ կարմրալար, սակայն ունէին այն-

քան կենդանութիւն, որքան թփից պոկուած զարդը՝
որ թառամում է իւր հետ փնջուած շուշանների մէջ...:

Առաջին անգամից իսկ այդ կինը գրաւեց իմ բո-
լոր ուշաղը ութիւնը. ես ամբողջապէս աչք դարձած՝
նայում էի նրան, նայում էի և չէի կշտանում.

Բայց ինչ կար նրա մէջ. ինչն էր ինձ այնպէս
դիւթել ու հմայել. Միթէ միայն գեղեցկութիւնը. Հար-
կաւ, ոչ. ըստ որում մինչեւ այն՝ շատ աւելի գեղեցիկ
կանանց էի հանդիպել և սակայն դեռ ոչ ոք արդպիսի
տպաւորութիւն չէր թողել վրաս. Թւում էր թէ՛ կար
և մի ուրիշ պատճառ և այդ՝ նրա դէմքը արտալայ-
տութիւնն էր, որ այնքան վեհ ու պատկառելի լինելով
հանդերձ, ցօլացնում էր իւր մէջ այնպիսի մի պարզու-
թիւն ու մանկական անմեղութիւն, որպիսին կարելի էր
տեսնել նկարների դէմքին այն կանանց, որոնք ապրում
էին Մեդիչների շրջանում, երբ նկարչի վրձինն ու ար-
ձանագործի քերելը պատկերացնում էին գեղեցկութիւնը
պարզ, խաղաղ, փաղաքող, բայց երբէք պատշաճի սահ-
մանն անցնող արտալայտութեամբ:

Սակայն, երբ մի վայրկեան նա յառեց վրաս իւր
աչերը, ինձ թուաց թէ նրանց մէջ վառւում է և ու-
րիշ հուր. Խսկոյն իմ հայեացքը ուղղեցի այդ աչերին,
կամենալով գէթ մի վայրկեան վայելել նրանց հրապուրը.
բայց կոյսը նորէն շրջեց իւր դէմքը և ինձ մնաց դի-
տել նրա գեղեցիկ պրօֆիլը, որ նմանում էր ոչ թէ
կենդանի մարդու, այլ ալեբաստրից թափած արձանի
դէմքին:

Այսուամենայիւ նրա այդ վայրկենական հայեաց-
քը իմ մէջ նոր մտքեր զարթեցրեց.—անկարելի է որ
սրա ներսը խաղաղ լինի դրսի չափ, մտածեցի ես. ան-
կարելի է որ սրան շրջապատող արդի կեանքը՝ մտածել
չըտալ իրեն այնպիսի բաների մասին, որոնց վրայ չէր
մտածել, եթէ գտնւում լինէր կուսանոցի պատերում:
Զէ որ սա իւր առաջ այժմ տեսնում է մի հասարակու-
թիւն, որ ոչնչով չէ նմանում այն հասարակութեան,
որի մէջ ինքն ապրել ու կրթուել է տարիներով. տես-
նում է մարդիկ, որ ուրախ են ու զուարթ, ազատ և
ինքնիշխան, գնում են՝ ուր կամենում են, ապրում են

ինչպէս ցանկանում են, ոչ լաւիտեան անփոփոխ պատուէրներ են կատարում, ոչ խստասիրտ հսկողի հրամաններից են դողում։ Այստեղ ամեն մարդ կարող է խօսել, ինչ կամենում է, խնդալ ու ծիծաղել, երբ կամենում է։ բանիւ բանիւ, ազատ է լինել այն, ինչ որ ազատ բնութիւնն է պահանջում և ոչ թէ այն՝ ինչ որ մարդկային տգիտութիւնն է հնարել և բռնութիւնը՝ սրբագործել, եւ, սակայն, նա տեսնում է որ ինքը սրանց թուին չէ պատկանում... չէ կարող սրանց պէս ազատ լինել կամ գործել։ Գոնէ, գիտենալի թէ ի՞նչ է մտածում՝ նայելով իւր զըշապատողներին, լսելով նրանց անհոգ զրոյցներն ու ուրախ կատակները։ արդեօք նախանձում, թէ արհամարհում է նրանց... գուցէ աւատում է իւր կորած անցեալը, վաղաթառամ երիտասարդութիւնը, (ըստ երեսութիւն նրա տարիքը 35-ից աւելի չէր), կամ գուցէ անհծում է վանքի պարսպները և այն վալրկեանը, որ ստիպեց իրեն ալդուխտն անելու...։

Բայց նա կրկին նայեց ինձ և այս անգամ արդէն աւելի ակնապիշ... Աստուած իմ, ինչ հրաշալի հայեացք էր այս. ի՞նչ երկնալին աչեր... Միթէ նրանք այլ ևս չե՞ն կարող սրտեր գերել. և այս սիրուն բերանը՝ չէ կարող նորից սիրու խօսքեր շշնջալ. իսկ այս զրիտունքները՝ չե՞ն կենդանանալ ու զերմ համբոյրներ չե՞ն դրոշմիլ սիրող մարդու շուրթերին... Հապա ինչու են նըրանք ալսքան գեղեցիկ ստեղծուել. միթէ անօգուտ թառամելու համար...։

—Տես թէ մեր բարեկամը ի՞նչպէս է գրաւուել նորեկով, գարձաւ Վերա Վասիլեանան ամուսնուն:

Ես յետ նայեցի և տեսալոր նրանք ծիծաղում են։ —Այո՛, տիկին, այս նորեկը շատ է զբաղեցնում ինձ, ասացի ես։

—Այդ արդէն երեսում է, որովհետեւ դուք այլ ևս կողմը չէք նայում։

—Իրաւունք էլ ունի, նրա աչքերն զբաղուած են արժանաւոր առարկալով, յարեց նւան նւանիչը։

—Իմ աչքերից աւելի՝ միտքն է զբաղուած, նկատեցի ես։

— Զեր միտքը, միթէ կարելի է, զարմացաւ տիկինը:

— Ինչը չէ կարելի, հարցը ես:

— Որ տղամարդը նստէ գեղեցկուհու առաջ և մը-

տածէ:

— Այդ ինձ շատ է պատահում:

— Դուք ուրեմն ձանձրալի ասպետ կը լինիք կա-
նանց համար, նկատեց տիկինը ծիծաղելով:

— Այս, տիկին, դեռ ոչ ոք չէ գովել ինձ այդ պաշ-
տօնի համար, խոստովանեցի ես:

— Բայց ինչ էք մտածում:

— Այն թէ՝ ինչո՞ւ այս հրաշալի ծաղիկը թառամել
է փշերի մէջ:

— Վանքի մասին է ձեր խօսքը:

— Այո՛, տիկին, ամեն կրակ մարող այդ ցուրտ
շիրմի մասին:

— Բայց համոզուեցէք որ նա թառամել է իւր թփի
վրայ, այդ աւելի լաւ է, քան թէ նա պոկուէր թփից
և թառամէր մի տղամարդի անմաքուր ձեռքերում:

— Բայց նա կարող էր զարդարել մի արժանաւոր
կուրծք:

— Մի քանի ժամ միայն:

— Կամ ոսկեզօծ ծաղկամանում փալլել դահլիճի
մէջ և պարարել աչքերը բազմաթիւ հիւրերի...:

— Որոնցից իւրաքանչիւրը մի թերթ պոկելով նրա-
նից՝ աւելի անփառունակ վախճան կը պատրաստէր նրա-
համար, յարեց իւան իւանիչը ժպալով:

— Դուք այդ կարծիքն ունիք կանանց ճակատագրի
մասին, հարցը ես:

— Ուրիշ ճակատագրի չունի գեղեցիկ կինը, եթէ
նա չէ ապրում ժայռերի գագաթին, մենաւոր արծուի
բունում, որին չէ մօտենում հետամուտ ոսոխը, պա-
տասխանեց խօսակիցս ջերմութեամբ:

— Դա շատ հին երգ է, նկատեցի ես:

— Բայց նրան այսօր էլ սիրով են երգում բոլոր
փորձառուները:

— Որոնք հետաքրքրուում են միայն արծիւների
շահնվ և երբէք չեն մտածում նրա բունում փակուած
վարուժանի մասին:

— Օ՛, այդ աւելորդ է. բաւական է որ ժայռերն ունենան լալն հորիզոն, առողջարար օդ և սովամահ չը լինելու չափ կերակուր... ալդքանով էլ վարուժանը կարող է գոհ լինել և զգալ իրեն երջանիկ, երբ ընկերի անկեղծ սէրը կը գայ իրեն գգուելու և իւր կեանքի պակասը այդ գգուանքով լցնելու։ Գլխաւորն այն է որ նա սովորէ բաւականանալ քչով և առիթ չունենալ յաճախ տեսնել իւր մօտ մի օտար, որ թագուն շշունջով վրդովէ նրա սիրտը, կամ խելամուտ անէ այնպիսի նորութեանց, որոնց չիմանալը՝ վարուժանի օգուտն է։

— Բայց ի՞նչ հայեացք է այդ. առանձնացնել կնոռը որ նա մնալ անարամտ... Աւելի լաւ չէ աշխատել մաքրել մթնոլորտը, որ շրջապատում է նրան։

— Օ՛, ի հարկէ, աւելի լաւ է. այն ժամանակ մարդը հէնց իւր մահկանացու մարմնով կը մտնէր արքալութիւն։ Բայց հնարաւոր է այդ։ Փորձն արդէնցոյց է տալիս որ այն օրից ի վեր՝ ի՞նչ գիտնականներն ու բարոլագէտները սկսել են իրենց նոր գիւտերով ու ստեղծած ճշմարտութիւններով հասարակական կեանքի մթնոլորտը մաքրել, այդ օրից ապականութիւնն աւելի է զօրացել, Առաջ մարդիկ յանցանքը գործում էին պարզութեամբ, առանց նրան վարպետօրէն ծածկել կարենալու, ուստի և յանցաւորների թուով՝ լինում էին դատապարտեալներ. այսօր, համարեա, ամենքն են յանցաւոր և սակայն, ոչ ոք դատապարտեալ...։

— Ի՞նչ է պատճառը ձեր կարծիքով։

— Այն որ մարդիկ գազաններ են և սակայն մենք նրանց ուրիշ էակների տեղ ենք դնում։ Եթէ գազանին գազան ճանաչէինք, ապա նրա տալիք վնասից էլ ազատ կը մնայինք, որովհետեւ կը պաշտպանուէինք։ Բայց այժմ, առհասարակ, այն կարծիքն է տիրում, թէ մարդիկ այլ ևս առաջուանը չեն. թէ լուսաւորութիւնը նրանցից հանել է չար գազանը և տեղը դրել իսկական մարդուն. ուրեմն տիրողը ազնւութիւնն է, որից այլ ևս չը պէտք է վախենալ, Այս թիւր կարծիքը ստեղծել է մի քաօս, որի մէջ ճարպիկներն ու ձեռնածուները հնձում են յաջողութեան դափնիներ, մինչդեռ

համեստ, առաքինի և արժանաւոր մարդիկ կամ դառնում են միայն զօհ, կամ անլայտութեան մէջ կորչում։ — Ի՞նչ անել ուրեմն, նորից դառնալ հնին։

— Չեմ ասում դարձէք հնին. որովհետեւ ոչ մի ապուշ չի վերաբառնալ ընթացած ճանապարհով նոյնը նորից անցնելու համար. այլ ասում եմ, մի գովէք նորը, որովհետեւ նրա մէջ գովելու ոչինչ չկալ։

— Եթէ դու նկարիչ լինէիր, միշտ զօրեղ գոյներ գործ կածէիր. չը ստածելով որ գրանով փչացնում ես նկարդ. նկատեց տիկինն ամուսնուն. եթէ հնի մէջ տասը շան է եղել, նորի մէջ ալդ լաւից հարիւրները կան, ինչու ես ճշմարտութիւնը բոլորովին մոռանում։

— Եւ եթէ կատարեալը ձեռք չէ բերւում այժմ, աւելացրի ես. դրա պատճառն այն է, որ մենք տակաւին ճիշդ չենք ըմբռնել ժամանակակից մարդու հոգեբանութիւնը, ուստի և շատ դէպքում կրթում ենք նրան սխալ ճանապարհով։ Տուէք նրան համապատասխան կրթութիւն և կը տեսնէք որ ձեր ճանաչած գաղանի մէջ հրեշտակ է ապրում։

— Հա, հենց խնդիրն էլ ալդ է որ մենք չենք խոստովանում մեր տգիտութիւնը՝ ժամանակակից մարդուն ճանաչելու վերաբերմամբ և, սակայն, շարունակում ենք կրթել նրան համաձայն մեր անճանաչողութեան։ Եւ համոզուած լինելով որ արդէն գտնուում ենք ճշմարիտ ճանապարհի վրայ, ազատօրէն ծաղրում ենք հին բարքերն ու սովորութիւնները, առանց մտածելու թէ՛ եթէ նրանք մարդուն չէին ճանօթացնում փիլիսոփայութեան ու մատեմատիկայի նրբութիւններին, չէին բարձրացնում մինչև Պարնասի գագաթը, գոնէ սովորեցնում էին լինել համեստ, բարի և երախտագէտ, վարժեցնում էին տրիութեան և աշխատասիրութեան. սիրելի էին դարձնում նրան անձնութիւնութիւնն ու գիւցազնական առաքինութիւնը։ Ի՞նչ է տալիս սակայն ալժմեան կըրթութիւնը։ Նա զարգացրել է ամբարտաւանութիւնը և պոռոտախօսութիւնը, ստեղծել է ծոլլերի ու ձրիակերների ոհմակներ, որոնք լանուն, ո գիտէ, ինչ բարձր գաղափարների հարստահարում են ժողովուրդը. ասպարէզ է բացել կոպիտ անձնապաշտութեան. անհետացել

Է անձնուիրութեան վսեմ գաղափարը...: Նայեցէք ու-
սումնաւարտ երիտասարդների այն շարքերին, որոնք
իրար ետևեց գալիս մտնում են հասարակութեան խա-
ւերը. աշխատեցէք գտնել նրանց մէջ առաքինի, անձ-
նուէր, սեփհական եւսն ուրացող և ժողովրդի բարւոյն
նուիրուող անձանց. որոնեցէք իսկական մատդուն և
տեսէք թէ նրանից քանիսը կը գտնէք: Արդիւնքը կապ-
շեցնէ ձեզ: Ի՞նչ է դրա պատճառը, այն՝ որ մեր տղա-
ները սովորում են ամեն բան՝ լեզուագէտ, գիտնական
շահագործ և ալլն լինելու համար, բայց չեն սովորում
ոչինչ՝ մարդ լինելու համար: Մենք ունենք բազմա-
թիւ պաշտօնեաներ, որոնք մեր աղջկերանց սովորեցնում
են խօսել օտար լեզուներով, երգել, նուագել, պարել
և հագնուել գեղեցկագէտի ամենանուրբ ճաշակով,
բայց չունենք մարդիկ, որոնք խօսէին նրանց թէ՝ ինչ
պիտի անեն եթէ երբ և իցէ բաղդը կապէ իրենց մի
երիտասարդի հետ. ինչ պիտի անեն նրան և իրենց եր-
ջանկացնելու, սեփհական լարկը խաղաղութեան ու
քաղցրութեան օթևան և ոչ թէ դժոխք գարձնելու
համար. ինչ պիտի անեն զօրեղ մի ընտանիք ստեղծե-
լու, արժանաւոր զաւակներ սնուցանելու և ալդպիսով
հայրենիքին պիտանի անդամներ տալու և նրանցով
հայրենիքը զօրացնելու համար...: Եւ հենց այս պատ-
ճառով էլ մենք ալժմ ունինք անժիւ օրիորդներ, բայց
չունինք հարսնացուներ. ունինք սիրուհիներ, բայց չու-
նինք ամուսիններ. ունինք կենցաղագէտ ու պչըող կա-
նալք, բայց չունինք տան հիմքը իւր ուսերին կրող
ժրագլուխ տան տիկնալք. իսկ որ ամենից ցաւալին է՝
ունինք միշտ պահանջող, քրտմնջող, օրին մէկը առողջ՝
իսկ տասը հիւանդ, միշտ դիւրագրգիւ, ու անհամբեր,
յաճախ իրաւունքից խօսող, բայց երբէք իւր պարտքը
լիշող հանըմներ և սակայն չունինք ընտանիքի պատուին
ու զաւակի սիրուն նուիրուած՝ և ալդ սիրու համար
ամեն ցաւ ու վիշտ համբերութեամբ տանող առաքինի
մայրեր...: Այս այսպէս լիներուց յետով՝ դուք ինչո՞ւ էք
զարմանում երբ ես ասում եմ թէ՝ եթէ ձեր այս «հրա-
շալի ծաղիկը» (կարծեմ ալդ անունը տուիք այս գեղե-
ցիկ միանձնուհուն) ֆալլում լինէր դահլճի մէջ՝ ոսկե-

գօծ ծաղկամանում, ապա նրա շուրջը վիստող հիւրերը
ոչ թէ այդ ծաղկի տեսքով կզմալիէին, այլ անպատճառ
իրենց թաթերը կը պարզէին նրա քնքոյշ թերթերը
կապտելու համար, Ուրեմն, կամ լաւ է որ ծաղիկը թա-
ռամի իւր իսկ բունի վրայ, ինչպէս որ քիչ առաջ կինս
էր ասում, կամ արծուի փարուժանը ապրէ ժայռերում,
լեռան գագաթին, որպէս զի որսորդին մնալ անմատ-
չելի...:

— Ալդ ձեր հաստատ կարծիքն է, հարցը ես:
— Եւ անփոփոխելին, պատասխանեց խօսակիցս:
— Իսկ դուք ինչ էք ասում, դարձայ ես տիկնոջը:
— Ես էլ ալդ կէտում համամիտ եմ ամուսնոյս:

Այս պատասխանը գրգռեց իմ հետաքրքրութիւնը:
— Ներեցէք որ անհամեստ մի հարց առաջարկեմ,
ասացի ես. դուք երկուսդ էլ խօսում էք իրեւ հիաս-
թափուածներ. բայց չէ երեւում որ ալդ հիասթափու-
թիւնը դուք լինիք ներշնչած իրար. ասացէք խնդրեմ
մկ է դարձրել ձեզ փորձառու:

— Տեսար, բարեկամ, բռնուեցար. նկատեց տիկինը
ամուսնուն ծիծաղելով:

— Անկեղծօրէն դրուած հարցին՝ կարելի է միշտ
անկեղծօրէն պատասխանել, խօսեց վերջինս սղարզու-
թեամբ. ես, բարեկամ, առաջ ամուսնացած էի մի երի-
տասարդ, քնքոյշ ու գեղունի աղջկալ հետ, որ սնուել
ու կրթուել էր այն բէցէպտներով, որոնք ալժմ ամեն
տեղ համարւում են տօւեր. նա իւր ուսածին պէս
ապրեց ու սիրեց, ալդ պատճառով էլ տանջուեց և մե-
ռաւ, թողնելով ինձ ժառանգութիւն վշտերի հետ միա-
մին և մեծ փորձառութիւն: իսկ Վերա Վասիլևան
ունեցել է դարձեալ մի ամուսին, որ պատկանում է
եղել աապրել գիտցող-ների կարգին. նրա սկզբունքն
է եղել՝ սիրոյ հաշուով տանջել, ազատութեան անունով
շղթալել և յանցանքներով արդարանալ. նա էլ դիպուա-
ծով մեռել և կնոջ թողել է ժառանգութիւն՝ դարձեալ
փորձառութիւն: Եւ ահա մի գեղեցիկ օր մենք հան-
դիպեցանք իրար և ստացած ժտուանգութիւններս հա-
շուելով, կշխու գտանք հաւասար: Մենք ամուսնացանք
և ալդ օրէց ի վեր ապրում ենք խաղաղ ու անվրդով:

Մեր կեանքը թէպէտ չունի արտաքին փալւ բայց լի է սերքին հանգստութեամբ, Երբեմն միայն տեղի են ունենում մեր մէջ փոքրիկ վիճաբանութիւններ. ալդ էլ այն պատճառով որ ես առաջ ծալրայեղ ազատամիտ լինելով՝ հանգուցեալ կնոջս շնորհիւ դարձել եմ պահպանողական. իսկ Վերա Վասիլևնան՝ սկզբում լինելով պահպանողական, մեռած ամուսնու զգրու դարձել է ազատամիտ: Բայց ալդ վէճերն էլ երկար չեն տեսում. խելօք ամուսինս, հենց որ տեսնում է թէ իմ պահպանողականութիւնը յամառում է, իսկոյն իւր ազատամութիւնը ծալրում մի կողմն է դնում: Ալդ բանը ես տեսնելով՝ շատ անգամ էլ ինքս եմ իմ համոզմունքը ծալրում և այսպիսով խաղաղութիւնը մնում է մեր մէջ մըշտատեւ:

Այժմ ես արդէն գիտէի թէ՛ ովքե՞ր են իմ դրացեները և թէ ինչո՞ւ երիտասարդը կապել է իւր բաղդը պառաւի հետ: Այս խնդիրն, այլ ևս չէր հետաքրքրում ինձ. բայց նրանց խօսածները միանձնուհու մասին՝ մտածել տուին ինձ երկար. թէպէտ չը կարողացան համոզել թէ՛ արդարեւ, ալդ գեղեցիկուհին լաւ բան է արել որ հեռացել է աշխարհից և փակուել կուսանոցում:

Որքան էլ աշխարհը լցուած լինի չարիքներով, որքան էլ բարին հազուագիւտ լինի նրա մէջ, այսուամենալին կեանքը այնքան հրապուրներ ունի, որ Աստուծոյ լոյսը տեսնող և նրա ջերմութիւնը վայելող մարդ արարածը, մանաւանդ եթէ նա չէ հանդիպել վշտերի և չէ կրել փորձութեան որ և է ծանրութիւն, անկարող է չը տենչալ վայելել այն ամենը, ինչ որ ուրիշները վայելում են իւր աչքի առաջ և ինչ որ իրեն ժւում է այնպէս քաղցր ու երանական:

Այս մտածութիւնը այնպէս յուզեց իմ հետաքրքրութիւնը, որ ես կամեցալ անպատճառ ծանօթանալ գեղեցիկ միանձնուհուն և ուղղակի նրա հետ խօսել այս նիւթի մասին: Թէ որքան պատշաճ էր իմ ալդպիսի վարմունքը, ես, ի հարկէ, ալդ մասին չէի մտածում. որովհետև իմ ցանկութիւնը հետաքրքրութիւնս գոհացնելն էր: Երբ այս յալտնեցի Իւան Իւանիչին, նա ասաց.

— Հարցըէք, ինչ կամենում էք, եթէ կը պատասխանէ, լաւ. եթէ ոչ, ինչ էք կորցնում:

Այս միջոցին միանձնուհին շարունակելով գործել գուլպան՝ մէկ-մէկ էլ նալում էր մեր կողմը, կարծես գուշակելով որ իւր մասին է մեր խօսքը:

— Թոյլ կը տաք, քոլրիկ. Հարցնել թէ դուք որ միաբանութեան էք պատկանում, դիմեցի ես նրան ֆրանսերէն: Միանձնուհին իսկոյն ժպտաց և գործը դնելով գոգում, կէս քաշուելով ու կէս շփոթուելով պատասխանեց.

— Ներողութիւն, պարոն, ես լաւ չեմ խօսում ֆրանսերէն...

— Իսկ գերմաներէն.

— Ի՞նչպէս չէ. ես գերմանուհի եմ, ասաց նա և խօսքի մնացորդը շարունակեց գերմաներէն, որից ես ոչինչ չը հասկացար:

Բայց Իւան Իւանիչն առաջ անցաւ և սկսաւ թէ խօսել ինքը և թէ թարգմանել մեր հարց ու պատասխանին:

Նուտով պարզուեցաւ որ «միանձնուհի» կարծածս «Գթութեան քոլրա» է եղել և պատկանում է Ա. Բերնարդեան կաթոլիկ միաբանութեան, որ Եւրոպայի շատ կէտերում ունի իւր բաժանումները, իսկ կենտրոնական քաղաքներում իւր ինստիտուտները, ուր ընդունելով որը ու աղքատ աղջիկներ, նրանց սնուցանում ու դատիարակում է և պատրաստում լատկապէս «գթութեան քոլրերի» պաշտօնի համար: Դրանցից նա խումբերով ուղարկում է կարիք եղած տեղը, ինչպէս օրինակ, պատերազմի դաշտը, վարակիչ հիւանդութեամբ բռնուած տեղեր, հասարակաց հիւանդանոցները և նոյն իսկ մասնաւոր տներ: Ալդ բոլոր տեղերում նրանց պաշտօնն է հսկել հիւանդներին, խնամել նրանց, օգնել բժիշկներին և շատ տեղ, ուր նրանք բացակայում են կատարել նրանց պաշտօնը, որի համար և իրենք ունենում են մասնաւոր պատրաստութիւն: Ընդհանուր աղէտների ժամանակ գթութեան ալդ քոլրերը ծառալում են ձրիաբար, իսկ եթէ մասնաւոր տեղերում ստանում են վարձ, կամ պարզե, նրանք ալդ դրկում են ինստիտու-

տի գանձարանին, ըստ որում իրենց ծախքերը հոգում է միաբանութիւնը:

Այս բացատրութիւնները տալու ժամանակ, գիտութեան քոլը շարունակ ժպտում էր, որից նրա դէմքը հետզհետէ կենդանանում և աւելի ևս գեղեցկանում էր. նրա խաժակ աչերը, որոնք արևելեան փիրուզն էին լիշեցնում, ամեն մի ժպտի հետ շողում էին նոր լուսով, և երբ ուսուցիչը թարգմանում էր իւր խօսքերը, նա յառում էր վրաս աչերը այնպէս ակնապիշ, որ կարծես այդ հայեացքով կամենում էր լրացնել թէրին այն բացատրութեանց, որ տալիս էր ուսուցիչը, թէպէտ ինքը ոռուսերէն ոչ միայն չը գիտէր, այլ և գուցէ կեանքում առաջին անգամն էր լսում:

Իմ հարցին թէ՝ այդ զբաղմունքը չէ ձանձրացնում իրենց, նա ժպտալով պատասխանեց.

— Բարի գործ անելուց կարելի՞ է ձանձրանալ:

— Ինչու չէ, թէ բարիք ստացողները ապերախտ են գտնուում:

— Մենք չենք սպասում որ երախտագէտ լինին մեզ: Բարիքը պէտք է գործել ոչ թէ նրա համար որ մարդիկ այդ իմանան, այլ նա, որ երկնքումն է: Այս ասելով նա աչերը ուղղեց վերև այնպիսի մի ջերմեռագութեամբ, որ անկարելի էր ենթադրել թէ՝ հաւատը չէ խօսում նրա մէջ:

— Եւ այդ ձեզ, ուրեմն, գոհութիւն է պատճառում:

— Անսահման:

— Բայց ինձ թւում է թէ՝ գոհ կարելի է լինել այն բարի գործից, որ մարդ կատարում է ինքնաբերաբար, առանց ուրիշներից ներշնչուած լինելու. մինչդեռ գուք այդ դէպքում կատարում էք միայն ձեր մեծերի հրամանը: Նարունակ հրաման կատարելու մէջ, անկարելի է զգալ ճշմարիտ գոհութիւն:

— Մեր գլխաւորները յարաբերութիւն ունին արտաքին աշխարհի հետ. նրանք են հետաքրքրուում ու աւելիկանում թէ՝ ո՞րտեղ կայ արդեօք կարիք մեր օգնութեան և այդ տեղերն էլ մեզ ուղարկում են. իրաւէ, մենք չենք հարցնում թէ, ինչ տեղ է այն, ուր

մենք գնում ենք, կամ ի՞նչ մարդիկ են, որոնց պիտի օգ-
նենք. որովհետև գիտենք որ ամեն տեղ էլ հիւանդը
կարօտ է խնամքի ու օգնութեան: Բայց թէ կամե-
նանք, կարող ենք չը գնալ. վասն զի ալդ անել՝ մեզ
չեն ստիպում, այլ առաջարկում են: Սակայն որովհետև
մենք սիրում ենք գործը, որի համար պատրաստուած
ենք, ուստի սիրով էլ նուիրում ենք նրան: Իրաւ է,
լաճախ մեր աշխատութեանց հետ կապուած են լինուա
նեղութիւններ, պատահում է, նոյն իսկ որ դրանք լի-
նում են կարի դժուարատար, բայց երբ տեսնում ենք
թէ ալդ նեղութիւնների շնորհիւ մահամերձը կենդա-
նանում, վիրաւորը բուժւում, ջրահեղձը կեանք է առ-
նում. երբ տեսնում ենք թէ մեր խնամքի շնորհիւ
ամիսներով հիւանդ բանտորն ու արհեստաւորը ձգում
են անկօղինը և դէպի իրենց անոք ու յուսահատ ըն-
տանիքը դառնալով՝ նորից ձեռք առնում զաւակների
համար հաց հալթալթելու արդար աշխատութիւնը. երբ
տեսնում ենք թէ մեր անդուլ ջանքերով կարողանում
ենք ազատել համաճարակի ձեռքից բազմաթիւ զոհեր
և ալդպիսով ամուսնուն՝ դարձնում ենք իւր կինը.
մօրն՝ իւր զաւակը, քրոջն՝ իւր եղբարը, որդուոյն իրենց
հալրը. երբ պատերազմի դաշտում, հալրենիքի պաշտ-
պանութեան համար կռուող ու վիրաւորուող զինուոր-
ներից մէկին ուշաբերում, միւսի՝ վէրքն ենք կապում,
երրորդի այլուող շրթանցը մի պուտ ջուր ենք մօտեց-
նում, կամ վրաններում պարկած հարեւրաւոր հիւանդ-
ներին հսկում ու խնամում ենք, որպէս զի կարողա-
նանք՝ յուսոյ և երկիւղի մէջ ապրող ծնողներին դար-
ձնել իրենց զաւակները, կամ նորատի հարսներին՝
ցանկալի ամուսիները, ալդ ժամանակ, պարոն, մենք
զգում ենք այնպիսի՝ մեծ երջանկութիւն, այնպիսի՝
անսահման երանութիւն, որի նմանը հազիւ թէ երևա-
կալել կարողանալ նա, որ չէ եղել մեր պաշտօնում և
չէ ապրել մեր զգացմունքներով...Արդ, ձեզ եմ հար-
ցնում, ալսպիսի գործ կատարելուց կարելի՛ է ձանձ-
րանալ:

Այս խօսքերն ասելիս՝ գթութեան քրոջ գէմքը
շիկնել, իսկ աչքերը փալլում էին իբրև զուգ գոհար-

ներ։ Թւում էր թէ՛ նրա մէջ գեռ չէ մարած այն հու-
քը, որ սրտերը ջերմացնում և բարձրին ու վեհին
հաօնելու ձգումը զօրացնում է մարդու մէչ։ Պէտք
էր ուրեմն մի գրգիռ, որ այն բոցավառուելով՝ երևան
հանէր իւր գոյութիւնը, որ մինչև այն ծածկուած էր
խաղաղ դէմքի և խոնարհ սքեմի տակ, և այդ գրգիռը
եղաւ իմ հարցը։ Բայց միթէ ալդպէս էր. արդեօք
չէի սխալում ես։ Եթէ ճիշտ է որ կանալք կարող են
քալ, երբ կամենան, տպա ուրեմն նրանք կարող են,
նաև, շիկնել, կամ աշքերը վառել, երբ ալդ հարկաւոր
է որոշ տպաւորութիւն անելու համար։ Այս դէպքում,
ուրեմն, աւելի լու է ճշտել, քան յափշտակուել, մտա-
ծեցի ես և շարունակեցի իմ դիտողութիւնները։

— Բայց դուք, յարգելի քոյր, մոռանում էք այն,
որ չէք ապրում ձեզ համար. չէք ճաշակում կեանքի
քաղցրութիւններից ոչ մինը։ Ի՞նչ զուարճութիւն է
կապուած լինել միշտ հիւանդների մահճին, լսել զա-
րունակ նրանց հեծութիւնները, տեսնել նրանց տան-
ջանքը, վկալ լինել այն ամենին, ինչ որ հերքում, բա-
ցասում է կեանքի քաղցրութիւնը, կամ ծաղրում նրա
գոյութեան նպատակը։ Այդպիսով դուք սովորում էք
նայել կեանքի վրայ ինչպէս մի ծանր բեռան, որ երբ-
ե իցէ պէտք է դէն ձգել՝ նրա ճնշումներից ազատուե-
լու համար։ Վասն զի ձեր շուրջը տեսնելով միշտ տըլ-
քութիւն, կսկիծ ու հառաչանք, մոռանում էք թէ՛
աշխարհում կարելի է ապրել եւ ուրիշ տեսակ. թէ՛
հիւանդների ու հիւանդանոցների մթնոլորտից զատ՝
կալ և ուրիշ մթնոլորտ, ուր մարդ արարածը կարող է
շնչել թարմ և առողջարար օդ, լինել ինքնիշխան,
գործել՝ ինչ կամենում է և ոչ թէ՛ ինչ որ հրամայում
են. թէ կարելի է յաճախ ազատ լինել հոգսերից, պար-
տաւորութիւններից. կարելի է խօսել, ծիծաղել, բա-
րեկամմների հետ զուարճանալ և հետեատպէս, վայելել
կեանքի քաղցրութիւնները, այն չափով, ինչ չափով որ
ընութիւնը իրաւունք է տուել ամեն մէկին վայելելու.
միով բանիւ, Աստուծոյ ստեղծած ալս սիրուն աշ-
խարհում կարելի է ապրել ալնպէս, ինչպէս որ, ահա,
մենք ամենքս ենք ապրում։

Գթութեան քոլը իմ խօսքերի թարգմանութիւնը ուսուցչից լսելուց յետով՝ վրաս ձգեց ալնպիսի մի հայացք որ, կարծես, հանդիպել էր աստուածամարտ մի հերետիկոսի, որից կամ պէտք էր իսկոյն և եթ փախչել, կամ աշխատել որ նա դառնալ ուղիղ ճանապարհ։ Այդ ես գուշակեցի ուղղակի նրա դէմքից և, մանաւանդ, աչքերից, որոնք ալժմ ինձ վրալ նալում էին անվտահորէն։ Եւ գուշակութիւնս սխալ չէր։

— Ինչո՞ւ է պարոնը ալդպէս բաներ խօսում, միթէ քրիստոնեալ չէ, հարցրեց նա ուսուցչին միամիտ պարզութեամբ։

— Նա հայ է, պատասխանեց վերջինս, կարծելով թէ դրանով ամեն ըան ասաց։

— Ռումին, հարցրեց գթութեան քոլը Արմեմիե՛ և Բուրմանի բառերը շփոթելով իրար հետ։

— Ոչ, հայ եմ ասում. հայ, կրկնեց ուսուցիչը։

— Հայ... հայերն ինչ ազգ են։

— Ինչպէս թէ ինչ ազգ. միթէ չըգիտէք, զարմացաւ ուսուցիչը։

— Ոչ, չըգիտեմ. խոստովանեց կինը անկեղծօրէն։

— Սրանք հին ազգ են. ապրում են Փոքր Ասիայում։

— Բայց ինչ հաւատ ունեն. մահմեդական են...։

Ուսուցիչն սկսաւ ծիծաղել և երբ թարգմանեց ինձ նրա խօսքերը, ասացի։

— Յալտնեցէք գթութեան քրոջը՝ որ երկրագնդի վրայ գտնուած բոլոր ազգերից առաջ՝ հայերն են քրիստոնէութիւն ընդունելու. (այստեղ, ի հարկէ, թոլլ տուի որ ազգասիրութիւնը Արգարի շրջանը համարէ հայկական). ես էլ, ուրեմն լինելով այդ ազգի զաւակը, եմ. մի ենոյն ժամանակ, ճշմարիտ քրիստոնեալ։

— Բայց միթէ քրիստոնեան կարո՞ղ է ասել այն, ինչ որ գուշակ ասացիք, հարցրեց նա ջերմութեամբ։

— Ես ինչ ասացի։

— Ասացիք թէ պէտք չէ օգնել ուրիշին. թէ մենք աշխարհում յեզ համար պիտի ապրենք։ Մինչդեռ Քրիստոս հակառակն է պատուիրել։ Նա հրամայել է բարի անել ոչ միայն եղբօրն ու բարեկամին, այլ և

թշնամում: Նա պատուիրել է սիրել ընկերին, օգնել աղքատին, խնամել հիւանդին...:

—Ես հակառակ չեմ ալդ պատուէրներին, միայն թէ ասում եմ որ ալդ ամենն անելով հանդերձ, մարդ չը պէտք է մոռանալ իրեն: Եթէ ունեցած բարիքիդ մի մասը տալիս ես ուրիշն, մի մասն էլ դու վալելիր: Այստեղ Քրիստոսի պատուէրի գէմ ոչինչ չը կար: Նա ասել է՝ սիրելը ընկերդ ինչպէս քո անձը, բայց չէ ասել՝ սիրելը քո անձից աւելի: Եւ սակայն դուք ալդպէս էք անում: Բնութիւնը ձեզ ստեղծել է առողջ, գեղեցիկ, ապրելու և վալելու ամեն կարողութիւններով օժտուած, բայց դուք նրա տուած բարիքը ոչնչացնում, առողջութիւնը վատնում, գեղեցկութիւնը խամրեցնում էք հիւանդանոցների նեխուած պատերում: Օգնեցէք տկարին, խնամեցէք հիւանդին. բայց դուք էլ ապրեցէք, դուք էլ վալելցցէք. հակառակն անելու մէջ՝ անկեղծութիւն չեմ տեսնում:

—Սխալում էք, պարոն. մենք անում ենք ալն, ինչ որ մեր խիղճը, մեր ներքին մարդն է մեզ թեւագրում: Ուրիշներին բարիք անելով՝ մենք արդէն զգում ենք մեզ անհունապէս երջանիկ. ալդ պատճառով էլ ուրիշ կենցաղ չենք պարում:

Այս միջոցին միևն կողմի նստարանից մի ձայն կանչեց գթութեան քրոջը: Վերջինս որ խօսելու հետ միամին գործում էր և գուլպան, դրեց ալն նստարանի վրայ և մօտենալով ձայնողին, որ նոյնպէս գթութեան քոյլ էր, բայց ոչ իրեն պէս գեղեցիկ, սկսաւ հետը խօսակցել:

Զընալելով որ ես հակաճառում էի, ալսուամենարնիւ, գթութեան քրոջ խօսքերը հենց իմ սրտի խօսքերն էին.—ալդ իմ սիրած դաղափարն էր՝ նուիրուել հասարակաց բարւոյն և դրա մէջ որոնել ճշմարիտ երջանկութիւնը. բայց ես, իսկապէս, չէի հաւատում խօսակցիս, չէի համարում նրան անկեղծ. որովհետև, (ինչ մեղքս թուգցնեմ) միշտ թերահաւատութեամբ եմ վերաբերուել ալն ամենին, ինչ որ կաթոլիկական կնիք է կրել իւր վրայ: Ալդ պատճառով էլ, երբ նա հեռացաւ աստցի ռուս ծանօթներիս.

—Գիտէք, ես չեմ հաւատում սրան: Այն ամենը

ինչ սա ասաց ալժմ, սովորած խօսքեր են, կրկնուած, երեկի, հազար անգամ։ Կաթոլիկ ներշնչողները ունին որոշ հանգանակներ, որ բերան են անել տալիս իրենց հետևողներին։ Պէտք է կարենալ սրանց ներօը թափանցել, լսել այն՝ ինչ որ փակ սիրտն է ասում...

— Ինչո՞ւ էք ալդպէս կարծում, ընդհատեց ինձ Վերա Վասիլեսան, ինչո՞ւ չէք ընդունում որ նա խօսում է ճշմարտութիւնը, ասում է այն, ինչ որ զգում՝, ինչին որ հաւատում է։

— Բնական օրէնքները խօսքով բռնաբարելը հեղտէ բայց գործով նոյնն անելը դժուարին, եթէ չասեմ անհնարին։ Ով որ կամենում է բնութեան ձախնը խեղդել իւր մէջ, պէտք է օժտուած լինի ուժեղ կամքով, անսպառ կորովով։ Նս չեմ տեսել կին, որ կարող լինէր ալդ բարեմասնութիւններով պարծենալ։ Եթէ դէպքը բերէ որ այս գթութեան քոյլը ստիպուած լինի կոռուել աշխարհային հրապուրների դէմ, հաւատացած եմ որ նա կրնկնի առաջին թեթև հարուածից իսկ։

Եւ իմ խօսքերի հիմնաւոր լինելը ապացուցանելու համար, համառօտ կերպով պատմեցի ալն ամենը, ինչ որ լսել ու իմացել էի Վարշաւի ճանապարհին՝ ինձ ուղեկցող ուուսի ու լեհացու ծանօթ գթութեան քոյլերի մասին։

— Անշուշտ սա ևս նրանցից մինն է, միալն տարբեր տարազով ու զատ երկնքի տակ, եզրակացրի ես իւ վերջոյի։

— Մեծ զանազանութիւն կալ նրանց և սրա մէջ, նկատեց Վերա Վասիլեսան՝ իմ պատմութիւնը լսելուց լետոյի։ Նրանք, որ գթութեան քոյլ լինելու ուխտ են արել և ապա դրժել ալդ ուխտին, ուրիշ կերպ վարուել չէին կարսդ, որովհետեւ մանկութիւնից ի վեր սովորած լինելով ապրելուն ու վայելելուն, որոշել են աշխարհից հեռանալ այնպիսի ժամանակ, երբ անսպաս մի ձախորդութիւն արգելը է եղել նրանց՝ ցանկացած չափով նոյն կեանքը վալելելու։ Դա եղել է ոչ թէ համոզմունքի այլ լուսահատութեան, որոշում։ Եւ ալդպատճառով էլ՝ երբ դէպքը նորէն այնպէս է բերել որ նրանք հաճուքը տեսել են աչքի առաջ, փարել են նրան

ըոլոր ուժով, որովհետեւ սկզբից պատրաստուած են եղել գրա համար: Այդպիսի ուխտերը անկեղծ լինել չեն կարող: Նրանք նմանում են այն խոստումներին, որ անում են արբեցողներն և ծխողները, երբ սովորութեան ալյանդակութիւնը զգուեցնում է վերջապէս թէ իրենց և թէ շրջապատողներին: Եւ նրանք յաճախ զըսպում են իրենց զարմանալի համբերութեամբ, բայց առժամանակ. որովհետեւ հենց որ խմելու կամ ծխելու հրապուրիչ առիթ է ներկայանում, իսկոյն նոր ուժով անձնատուր են լինում հին մոլութեանը, առանց, նոյն իսկ տուսած խոստումը լիշել կարենալու: Այս քոյրերը սակայն, ուրիշ մարդիկ են, Սրանք մանկութիւնից սովորում են հեռու մնալ կեանքի հրապուրներից, ատել հեշտութիւնը և ապրել բարի գործի համար: Այս իսկ պատճառով պէտք է կարծել որ այս քոյրն ևս խօսում է անկեղծօրէն, հաւատում է իւր ուխտի սրբութեանը և հաւատարիմ էլ կըմնայ նրան, ինչ գալթակղութիւն էլ որ հանդիպէ իրեն՝ ընտրած ճանապարհի վրայ:

Իւան Իւանիչը համամիտ էր կնոջը, բայց ես՝ ոչ: Իմ կարծիքն այն էր որ սա ևս, իւր շատ քոյրերի նը. յան, կըմքարէ բնութեանը նրան հասանելի հարկը, հենց որ առիթը ներկայանալ. հետևապէս, պէտք չէր խտիր դնել սրա և առաջինների մէջ:

Եւ որովհետեւ գիտցածս պատմութիւններից զատ՝ իմ մասին էլ այն կարծիքն ունէի թէ՝ բաւական շատ եմ ապրել աշխարհում և, ուրեմն, ճանաչում եմ կանոնց այնքան որ նրանց հոգեբանութիւնը քննելիս կարող եմ սիալներ չանել, ուստի քաշուեցալ իմ անկիւնը և սկսալ դիտել գթութեան քրոջը, որ նորէն վերագառնալով՝ նստել էր տեղը և գործում էր գուլպան... Իմ մէջ մի անզուսայ ցանկութիւն էր ծնուել՝ հետևել նրան շարունակ՝ ձեռք բերելու համար, գէթ մի փաստ, թէկուզ ամենաթոլլ, որ կարողանար արդարացնել նրանկատմամբ ունեցած իմ համոզմունքը: Այս իսկ պատճառով, այժմ ես նրան դիտում էի մի նոր և առանձին հետաքրքրութեամբ, աշխատելով որսալ նրա աշերի հայեացքը, յուսալով թէ՝ նրանց մէջ կարող եմ կարգալ իւր սրտի թագուն շշունչներից մինը.... Զէ որ

երբեմն կարելի է, նոյն իսկ, պատմութիւններ կարդալ ուրախ կամ թափածալիր, թովիչ կամ ցանկասէր, հպարտ կամ փաղաքուշ հայեացքների մէջ, մանաւանդ երբ նրանց ընկերանում են նմանատիպ ժպիտներ...։ Այս ճանապարհորդութեան ժամանակ ես շատ էի զբաղութել նման գիտողութիւններով և արդիւնքը նշանակել յուշատետրիս մէջ, այս անգամինն էլ կաւելանար եղածների թուին, եթէ արժանի լինէր ուշաղրութեան։

Իւան Իւանիչն ու իւր կինը չէին զբաղում ալժմ մեղնով. նրանք բացել էին պաշարի զամբիւլը և նախաճաշում էին։ Գիտութեան քոյլը աշքերը գուլպալին յառած և մի խաղաղ ժպիտ շրթունքներին՝ շարունակում էր գործը, երբեմն միայն ինձ, հարկաններիս, կամ ել ու մուտ անողներին նայելով։ Իս ես՝ դիտում, մտածում և, մի և նոյն ժամանակ, դարձեալ զմայլում էի նրա գեղանի դէմքով, երկնալին աշերով և նուրբ շուրթերի այն խաղաղ ժպիտով, որ թէպէտ համը, բայց թւում էր թէ՛ խօսում է շարունակ...։

Բայց ի՞նչ էր խօսում. ի՞նչ կարող էր խօսել...։

—Ա՛խ եթէ հոգին ականջ ունենար և ժպտի թափուն շշունջը լսէր... մտածում էի ես. և ինչո՞ւ բնութիւնը չէ զարգացը մեր մէջ մի վեցերորդ զգալարնք, որով կարողանալինք սրտի և հոգու խորքերը թափանցել։ Այս ժամանակ, ի հարկէ, գոյութիւն չէին ունենալ կեղծիքն ու դիմակը, սուտ ժպիտն ու սուտ արցունքը և ոչ էլ ճշմարտութիւնը ճանաչելու համար։ Կըստեղծուէր հոգեբանութիւնը, որը որքան էլ ճգնում է ճշտութեամբ վերլուծել հոգեկան երևոլթները, դարձեալ շատ դէպքում մնում է անծանօթ բան ճշմարտութեանը, վասն զի ճանապարհ չունի ենթակալական սահմանից դէնը անցնելու։

Այս մարտածութեան ժամանակ, գթութեան քրոջ կծիկը քսակի միջից ելնելով՝ քսակը գլորուեց լատակի վրայ։ Հենց այն է ուզում էի խոնարհիլ ու առնել, բայց նա առաջեց ինձ և կծիկն առնելով՝ քսակը դրաւ։

—Ալժմ արդէն տեսնում եմ որ անշնորհք ասպետ էք. ժպտալով նկատեց Վերա Վասիլևնան, որ թէպէտ զբաղուած էր երշիկ կտրելով, բայց և այնպէս, կնոջ

յատուկ սրատեսութեամբ նշմարեց թէ մեր կողմը ինչ նոր բան անցաւ:

— Ուզում էի վերցնել, բայց ինքն շտապեց, արդարացաւ ես:

— Գիտեմ, ուզում էիք... բայց օրինաւոր ասպետը ոչ թէ ուզում է, այլ կատարում է: Ալդպիսով աշխարհում դուք միշտ յետ կը մնաք:

— Ոչինչ էլ չի կորցնիլ, նկատեց Իւան Իւանիչը, առանց հայեացքը հեռացնելու ձուից, որ կճպում էր ձեռքին:

— Մի սիրուն կնոջ հաճուքը վաստակելը քիչ բան արժէ քո կարծիքով:

— Աւելի քիչ, քան այս ձուն. նկատեց ամուսինը և ձուն կիսեց ատամներով:

Բայց գթութեան քոյլը չէր նալում մեզ ու շարունակում էր գործել:

Գնացքը կանգ առաւ մի կալարանի առաջ, ուր ի միջի այլ ուղևորների ներս մտաւ մեր վագոնը մի երիտասարդ, համակրելի դէմքով գերմանուհի, իւր երկու սիրուն տղաների հետ, որոնք նմանում էին երկուորեակների, որովհետև երկուսն էլ միահասակ էին, դէմքի նոյն գծերով, կապոյտ աշխիներով և խարտեաշ, գանգրաւոր մազերով: Գթութեան քոյլը նրանց տեսնելուն պէս՝ թողեց իսկոյն գործը և ուրախութիւնն ինչպէս արևի շող նրա դէմքը լուսաւորեց: Ինձ այնպէս թուաց թէ՝ մտնողները իւր ազգակիցներն էին, վասն զի իսկոյն առաւ տղաների ձեռքը և մինչև որ մայլը տեղ կը գտնէր նրանց համար, ինքն սկսաւ շոյել ու գգուել փոքրիկներին, տալով նրանց շուտ շուտ գանազան հարցեր և զուարճանալով նրանց պատասխաներով:

Իմ տուած հարցին թէ՝ մտնողները իւր ազգակիցներն են, գթութեան քոյլը պատասխանեց.

— Ոչ. բայց ես, առհասարակ շատ եմ սիրում մտնուկներին... օհ, շատ: Հապա, նայեցէք, կարելի՞ է միթէ չը սիրել....

Ոյս ասելով նա աւելի մօտ քաշեց տղաներին, ոռոնք, արդարև, նմանում էին զոլդ հրեշտակիկների. գը-

գուեց նրաց, ողջագուրեց և երբ մալը եկաւ փոքրիկ-ներին տանելու, ասաց նրան.

— Ի՞նչո՞ւ մեզ մօտ չէք նստում. այստեղ էլ կարելի է տեղ գտնել... դուք հրաշալի զաւակներ ունիք... ես հիացած եմ նրանց վրայ. ախ, ի՞նչ սիրունիկ-ներն են, և նա նորից շոլեց նրանց մազերը:

Գերմանուհին ժպտաց և, ըստ երևութիւն գոհ որ իւր տղաները արժանացել են գթութեան քրոջ հիաց-մունքին, թոյլ տուաւ որ նրանք մնան վերջինի մօտ-բայց տղաները չը մնացին և հետևեցին մօրը:

Գթութեան քոլը, խաղաղ ժպիտը դէմքին, նայեց նրանց ետևից մի քանի վայրկեան և տպա խոր հառա-չելով՝ ձեռքն առաւ իւր գործը:

— Այս ամենը հօ տեսածք, հարցը ես հարևաննե-րիս, որոնք արդէն վերջացըել էին նախաճաշը:

— Ի՞նչ պատահեց որ տեսնենք, հարցը ուսու-ցելու:

— Այն՝ թէ ի՞նչ տպաւորութիւն արին այս տղա-ները մեր քրոջ վրայ:

— Ի՞նչ տպաւորութիւն արին:

— Նա հիացել, լափշտակուել էր նրանցմով, սիրտը կարծես թուլանում էր...

— Հա, ի՞նչ կալ որ, այդպիսի երեխաների վրայ ամենքը կը հիանան, խօսեց տիկինը:

— Բայց դուք սսում էիք թէ սրանք մանկութիւ-նից սովորում են հեռու մնալ կեանքի հրապոյրներից, ուրեմն և վարժում են չը գրաւուել նրանցմով:

— Հա, ասում էի. ի՞նչ գտաք դուք դրա մէջ իմ խօսքերը հերքող:

— Այս տղաները նոյնպէս, իրենց տեսակում, հրա-պոյրներ չէին. ինչո՞ւ ապա խեղճ կինը չը կարողացաւ անտարբեր մնալ դէպի նրանց:

— Ձեմ հասկանում ձեզ:

— Ի՞նչո՞ւ չէք հասկանում. նրանք ուղղակի կեր-պարանափոխեցին այս կնոշը, հէնց որ ներս մտան-սը սիրտը հրճուեց, դէմքը պայծառացաւ և երբ սկը-սաւ ողջագուրել նրաց, թւում էր թէ գտնւում է ան-

Հուն երանութեան մէջ. բայց նա տիրեց ու հառաջեց,
եղբ տղաները հեռացան:

—Եւ ալդ ամենից ինչ էք հետևեցնում դուք:

—Այն թէ՝ մարդկալին սրտի մէջ բնութեան դրած
զգացմունքը՝ անկարելի է խլել արհեստական ճանա-
պարհով. և ով որ, ուրեմն, ալդպիսի փորձ է անում,
նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի բռնաբարող, միաբանու-
թիւն լինի դա, թէ հասարակ անհատ: Ես պարզ տե-
սալ թէ ինչպէս այս քոլըն, իբրև կին, կը ցանկանար
ունենալ գէթ մինն այն հրեշտակներից, սիրել նրան,
գգուել, նրա թոթովանքով զուարճանալ... Տեսնում էք,
ուրիշի զաւակը չեն տալիս իրեն. նա, ամենաշտար,
կարող է նրանով զուարճանալ մի վալրկեան. լետով
խլում են և նա դրա համար հառաջում է թագուն...
Սա լիշածս հրապուրների դեռ մի օրինակն է և այն
ոչ զօրեղ տագնապ պատճառողը... Բայց կեանքը դեռ
որքան հրապուրներ ունի, որոնց չէ կարող դիմադրել
սիրտը, եթէ հանդիպէ նրանց իւր ուխտի ճանա-
պարհին:

—Եւ ուրեմն...

—Ուրեմն աշխարհում չեն կարող լինել գլխու-
թեան քոլրեր. բայց միշտ կը լինին պարզ քոլրեր,
գթոտ մալրեր և սիրող ամուսիններ: Հետևապէս պէտք
է թոլլ տալ կանանց լինել այն, ինչի համար որ բնու-
թիւնը ստեղծել է նրանց:

Այս միշոցին նորէն գետին գլորուեց գմութեան
քրոջ կծիկը. ես դարձեալ փորձ արի վերցնելու, բայց
դարձեալ անյաջող. գթութեան քոլըն աւելի արագ
շարժուեց:

—Դեռ ես իմ կեանքում՝ ասպետութեան անըն-
դունակ՝ այսպիսի մարդ չեմ տեսած. ինչպէս կարելի
է չը կարողանալ՝ վերցնել գետնից մի կծիկ, որ ընկ-
նում է այսպիսի գեղեցկուհու ձեռքից, երգիծաբանեց
Վերա Վասիլենան. փելիսովայելու փոխարէն աւելի լաւ
է սովորի՝ ծառալել սիրուն կանանց, աւելացրեց նա
ու կարկաչեց:

Գթութեան քոլըն ևս նայում էր մեզ ու ծիծա-

դում, թէպէտ չէր հասկանում թէ ինչի՞ մասին է մեր խօսքը:

Բայց ահա երրորդ անգամ գլորուեցաւ կծիկը և հասաւ մինչև վագոնի դուռը:

Այս անգամ արդէն արագ ոտքի ելալ և կծիկն առնելով՝ բերի գթութեան քըրջը, որն ընդունեց արև քաղցրաժամկետ շնորհակալութեամբ:

—Վերջապէս... ասաց տիկինը.

—Ալո, վերջապէս... բայց գիտէք ինչ պիտի առեմ ձեզ:

—Ի՞նչ:

—Այս կինը ո՛չ միայն հրապոյրներից փախչող չէ, ալլ նոյն իսկ նրանց եռանդող պտրողն է: Ես պարզ տեսնում եմ, որ սա ուղղակի կոկետութիւն է անում... կծիկը նա դիտմամբ է գլորում յատակի վրայ:

—Դուք վիպագրո՞ղ եք, հարցրեց լանկարծ Վերա Վասիլեսան:

—Ինչո՞ւ համար էք այդպէս կարծում, հետաքըլը-քըլուեցայ ես:

—Որովհետեւ ես ունիմ ալդպիսի մի ազգական, որ աչքի առաջ եղած ամենապարզ երևոյթներին տալիս է խիստ բարդ բացատրութիւններ. վասն զի այն հաւատն ունի թէ՝ որովհետեւ վիպասանը, միւնոյն ժամանակ է եւ հոգեբան, ուրեմն անկարելի է որ շատ բաներ չը տեսնէ այնտեղ, ուր հասարակ մարդը ոչինչ չէ տեսնում:

Տիկինն այս խօսքերն արտասանեց այնպիսի մի ծաղրական տօնով, որ ես ոչ միայն կուշտ ծիծաղեցի, ալլ և խօստովանեցի թէ՝ արդարեւ ես էլ երբեմն վիպագրելու փորձեր եմ անում:

—Ուրեմն ալժմ ինձ համար հասկանալի է ձեր կասկաչը. բայց եթէ դուք վէպ գըելու փոխարէն՝ սովորեք գուլպալ գործել, այն ժամանակ կը տեսնէք որ թելի կծիկը յաճախ ինքն իրեն ելնում է քսակից և գլորում յատակի վրայ, (մանաւանդ եթէ թելը հաւասար չէ ոլորտած), առանց որ գործողը մտածէր ալդպարկենին կոկետութեան մասին: Ալդ պատահում է,

նաև, այն պառաւներին, որոնք վաղնւց մոռացել են թէ կոկետ են եղել մի օր:

Բայց ինչ էլ որ չասէր Վերա Վասիլեսնան, ալսուամենայնիւ, գթութեան քոյրը վտանգի մէջ էր դնում իմ հաւատը. որովհետև, հազիւ թէ մենք լռեցինք մի վայրկեան, և ահա կծիկը նորէն գլորուեց յատակի վրայ:

«Այս արդէն չափից դուրս է», մտածեցի ես, թէ-պէտ իսկոյն էլ գնդիկը որսալով տուի քրոջը, որ դարձեալ ընդունեց քաղցրաժպիտ շնորհակալութեամբ:

—Այս անգամ ալլ ևս գուք չէք համոզիլ ինձ, ասացի ես տիկնոջը, որ հանգիստ ծիծաղում էր. ալս կինն ուղղակի խաղ է անում ինձ հետ. ալժմ ես կը փորձեմ աւելի մօտենալ նրան:

Այս ասելով՝ մօտ քաշեցի պայուսակս, որի մի տչքը լցրած էի Վենետիկի պատուական դեղձերով։ Ապատրաստուում էի նրանցով հիւրասիկել գթութեան քրոջը, որով և, գուցէ մի քիչ էլ նրա բարեկամութիւնը վաստակէի. Բայց շոգեմեքենան սուլեց, որ նշան էր թէ արդէն մօտենում ենք կայտրանին։ Պէտք էր ու-քեմն դիտաւորութիւնս յետաձգէի միւս ելքին։

Սակայն վագօնի պատուհանի մօտ հնչեց կօնդուկտորի սուր, առաձգական ձայնը «Գրաց»։ Գթութեան քոյրը վեր թռաւ։

—Մենք ուրեմն հասանք. ասաց նա, և արագ իւր գործը ամփոփեց։

—Դուք Գրաց պիտի իջնէք, հարցրի ես։

—Այո՛, Գրաց. պատասխանեց նա հակիրճ և ձեռքերը ձգեց դէպ վերին դարակը իւր կապոցն այստեղից առնելու համար։

—Ահա, ծառայելու յարմար միջոցը. ինչո՞ւ չէք օգնում, խօսեց Վերա Վասիլեսնան։

—Սրա հեռանալն ինձ շփոթեց. բայց պէտք է օգնել, ասացի ես և բարձրացալ նստարանը որպէս զի քրոջ կապոցը դարակից իջեցնեմ։

Բայց ինչ կապոց. երկար ու լայն մի տոպրակ էր դա, կապարի ծանրութեամբ, քաշում էի, քաշում և չէր շարժւում տեղից։

—Թողէք, խնդրեմ, ես ինքս կառնեմ, ասում էր գթութեան քոլը: Բայց ես մի կերպ վար իջեցը ծանրոցքը, որ երևի իւր մէջ պարունակում էր գթութեան քընջ բոլոր շարժական գոլքը:

Դնացքը կանգ տռաւ: Բայց ինչպէս շատ կալարաններում, նոյնպէս և այստեղ ոչ մի բեռնակիր ներս չեկաւ իրեղէններ դուրս հանելու: Ստիպուած էի ծառայութիւնս շարունակել, որովհետեւ քոլը ինքն էր կամենում դուրս հանել ալդ կոշտ ծանրոցը, որ անկարեցի էր թուլատրել: Այսուամենալիւ, մինչեւ որ տոպրակն հանեցի վագօնից և հասցը պլատֆորմը, հոգիս դուրս եկաւ:

Այստեղ էին արդէն գթութեան քրոջ ուրիշ ընկերուհիները, իրենց իրեղէններով, որոնց և մօտեցը մեր քրոջ գոլքը:

Պլատֆորմը, սակայն, այնպիսի դիրք ունէր, որ կառքերը նրան չէին կարող մօտենալ: Ես սպասում էի թէ՝ ահա, ուր որ է, կը գալ մի բեռնակիր, որին և կը լանձնէի բերածս ծանրոցքը: Ալդ պատճառով կանգնած սպասում էի և մի և նոյն ժամանակ, օգուտ քաղում ալդ վալրկեաններից որպէս զի, մի վերջին անգամ էլ կուշտ նայեմ գեղեցիկ քրոջը, բնութեան այն հրաշակերտին, որ բոլորովին անգիտակ իւր գեղեցկութեան զօրութեանը, կանգնած էր միւսերի հետ իրըև մի անտէր ու խղճուկ արարած...: Եւ սակայն հենց այստեղ, կաթողիկութեան ստրուկ ալդ խմբի մէջ, ես առաջին անգամ նրան ճանաչեցի լաւապէս: Մի կին, որ իւր հետ քարշէ տալիս կոշտ կտաւից կարած, գռեհիկ տեսքով և միայն մշակի ուսին վայել ալդպիսի մի տոպրակ, նա չէ կարող լինել ոչ կոկետ, ոչ պըզող և ոչ էլ բնութիւնից իրեն տուած հարստութեան արժէքը գիտցող էակ:

Բայց ինչ էր նա իսկապէս:

Մինչդեռ այս մտքերում խորասուզուած՝ ակնապիշնալում էի գեղանի քրոջը. նա լուշիկ մօտեցաւ. կրկնեց իւր շնորհակալութիւնը և քաղցը ժպտալով խնդրեց ինձ թողնել տոպրակը, որի ծալրից գեռ բռնած՝ սպասում էի բեռնակիրի:

Ես լետ չը քաշուեցալ և շարունակում էի նալել
նրա սիրուն, երկնագոյն աչերին:

Ի՞նչ հասկացաւ նա այդ բանից, և որի տեղ դրաւ
ինձ, չը գիտեմ. նա տարաւ ձեռքը գրպանը և հանե-
լով ալդտեղից իւր աղքատիկ աօրտմօնէն հանեց նրա
միջից մի փոքրիկ արծաթ փող և պարզելով դէպի ինձ՝
քաշուելով ու շիկնելով ասաց.

—Pardon... յե ո՛ո՛ այ քլուս... (ներեցէք, աւելին չու-
նիմ):

Ես իսկոյն թողեցի քսակը և ապուշ կտրած նայում
էի գեղեցկուհուն, որ անգիտութեան ու վարանման
այդ վայրկենին դարձել էր աւելի հրապուրիչ:

Այս կինն, ուրեմն, ոչինչ չէր հասկացել այն ա-
մենից, ինչ որ ես արել էի... նա, մինչև անգամ, գա-
ղափար չունէր այն մասին, թէ մարդիկ սովոր են ծա-
ռայութիւն անել կանանց, կամ այդ պատրուակով՝ հե-
տևել իւր նման գեղեցկուհիներին... նա չը գիտէր թէ՝
ինչ զօրութիւն ունին իւր խաժակ աչերը և ինչ հրա-
պուր իւր անմեղ ժպիտը... Բայց նա գիտէր, տեսել էր
որ բեռնակիրներ կան աշխարհում, որոնք ծանրոցներ
են տեղափոխում և դրա համար էլ ստանում մի քանի
սու: Ուրեմն ես ևս, որ, առ ի չգոյէ բեռնակրի, յանձն
էի առել իւր տոպրակը բերել մինչև ալլատֆօրմ և որ
այժմ կանգնած սպասում էի մի բանի, նշանակում է
թէ սպասում էի ոչ թէ կառքի, կամ բեռնակրի,
և կամ վերջին անգամ իրմով զմալլուելու, ալլ դրամա-
կան վարձատրութեան...

Եւ մինչդեռ նա ձեռքը պարզած՝ նալում էր ինձ
և իսկապէս զարմանում թէ՝ ինչո՞ւ չեմ փողն ընդու-
նում, ես գլուխս շարժեցի և մի վերջին անգամ էլ
հիացման հայեացքս ուղղելով իրեն, ճշմարիտ լուզմամբ
քացագանչեցի. — O sancta simplicitas! (ով սուրբ պար-
զութիւն):

Երբ դարձայ վագօն և պատմեցի ուղեկիցներիս
գիտութեան քրոջ արածը, Խւան Խւանիչը ուրախ-ուրախ
ծիծաղեց. մինչդեռ կինն ասաց.

—Դրանից աւելի լաւ դաս ոչ ոք չէր կարող տալ

ձեզ. դադարեցէք այսուհետև գաղտնիք որոնել այնտեղ,
ուր չը կալ արդարիսին:

— Իրաւունք ունիք, տիկին, յարեցի ես. իրաւ որ,
շատ անգամ ճշմարտութիւնը կանգնած է լինում մեր
առաջ, բայց մենք նրան որոնում ենք անյատութեան
խորշերում, այս դասը երբէք չի պիտի մոռանամ ես:

— Ուրեմն համոզուեցաք որ այս գթութեան քոլը

չէր նմանում նրանց, որոնց պատմութիւնն արիք:

— Այլ և հաւատացի թէ՝ արդարեւ աշխարհում կա-
րող են լինել «գթութեան քոլեր», եթէ միայն նրանք
չապրեն այն մթնոլորտում, ուր ծնուել ու սնուել են
լիշածդ քոլերը...:

Մուրացան